


Տոնձ կակիկ, որուն փայտը աղնիւ է, կեղեւոյն նեւորդները շատ ուժով, որով շուաններ կը լինուին և թանձր կտասներ. իսկ ծաղկէն կը հանեն ցնդական իւղ, չլփար, խէժ և բժշու-

կութեան մէջ կը գործածուի իբրև քրտնեցուցիչ. տես Ձև 81:

Տոնձ Կրամնիկայ, որուն ազգը կը համարուին Կամեկլիա և թէյ:



Ձև 190. Հասարակ մեղիքնեղ (Cigu ordinaire).



Ձև 191. Մեխակ (Giroflee).

Տոնձ Դանդորափ, որուն ազգը են Դահուրամ, (Ձև 191), Ոչնան, Մկնականջ կամ Բըզբուկ, չիլիկ շահողրամասերև:

Տոնձ Մանիլայի, որուն ազգը են Հոտաւտ

Մանուշակ, եռադոյն Մանիլակ, ճախնային Մանուշակ, Հայկական մոնիլակ, և այլն:

Տոնձ Մանիլոյի, որուն ազգը են Մանիլիա, Հաւկուր խոտ, և այլն:

Կը շարունակուի:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԻՏԵԼԻՔ

Որդունք. — Որդերն, կ'ըսէ Տարուին, ահա նա՝ նա՝ նա՝ գործաւորներ են. ներքնափոր արահներ կը յորինեն, և առ այս՝ ձեռաց և ոտից սեղձ իրենց բերանը կը փոխանակեն: Հող կ'ուտեն, և որովհետև զուրկ են ակաւներէ, կը շքփեն և կը մանրեն զայն՝ իրենց աղեաց մէջ գլտնուած մանրիկ քորերու մասնիկներով: Այնչհոլայ մասնիկունքն կը խառնուին այն թծուտնեցուն հետ, որք կը գոյանան որգերու աղեաց մէջ՝ փոխաւ տերևոց տարալուծութենէն, զորս կը կրծեն որգերն հողոյ հետ. ուստի կը ձևանայ կակուղ խոնաւ խառնուրդ մը:

Մարտողութիւնն կատարուելէն յետոյ, որդերն իրենց գեանափոր բնակարաններն գէպ կ'երկրի մակերևոյթը կը բարձրանան, բայց զբըն-

իվայր սողալով. այս գրիւք հագնա երկրիս երեսը հասնելով, իրենց երկայնութեան մի մասն ծակէն գուրս կը հանեն, և իրենց կղզիանքը կը թողուն երկրիս մակերևութին վրայ, գառնալով վերտին իրենց բնակարանը: Այս կըզկզանքն կը կազմեն երկրիս երեսը խաւեր, զորս կըցեր է Տարուին միջ համբարութեամբ չափել, և ահաւասիկ իրեն բանեցուցած ոճը: Երեսունէն աւելի փորձեր և քիտողութիւններ կատարած է գաշտերու վրայ, անտառաց մէջ, մարգագետիններու, ճամբաներու վրայ, զորս ժամանակէ մը վերջը փոխուած գտեր և բուրլորմին իրենց նախկին կազմակերպութենէն:

Չոր օրինակ, գաշտի մը մակերևոյթն ծածկուած էր ամիսոյ խաւով մը, որոյ վրայ կը տարածուէր կրային ուրիշ կարգ մը. վեց ամիս յետոյ՝ գաշտին մէջ ոչ ամիսոյ և ոչ կրի նշան կ'է-

րեւեր, և ընդհակառակն երկիրն բարակ թու-
լանման խոտով կանաչադարձ տեսիլ մ'ունէր:
Արգ, ուղղահայեաց փող մը փորելով նոյն գաշ-
տին մէջ քիչ մը խորունկութեամբ՝ երևան ե-
լուս անխոյրի խաւս, և անոր վրայ կրայիկն, և
անոնց վրայ երկուք ու կէս մասանայափ հաստու-
թեամբ բարձրացեր էր բուսական հողն: Գոր-
շեալ, շաճաջ մը արտնանան քարերով սալայա-
տակ շինուած էր, և երկու կողմերն ծառա-
տունկ յօրինուած: Երեսուն և չորս տարի վեր-
ջը՝ արտնանան քարի հետք ճեպացած չէր շաճաբուն
վրայ: Չոր փորելով գտան մասանայափ խորու-
թեամբ արտնանան յատակը, որոյ վրայ կազ-
մուներ էր բուսական երկիրն, յորում անթուհե-
լի որդունք կը զեռային: Տորուինի տան քով
կը գտնուէր գաշտիկ մը, այն աստիճան մը քա-
րեով և խիճերով, որ և ոչ իսկ շիւղ չէր բուսոյ
կարելի էր հոն կեանք ունենալ: Ամէն տօն
փոքրիկ քարերէն մէկ քանին կ'անհետանային,
ծածկուելով որդնամէ կղզիանքներէ: Բայց որ
անհաւատալի երեկ թերևս՝ այս է շէջարուու-
թիւնն, որ երեսուն տարին վերջը նոյն գաշտին
մէջ կ'արածէին՝ կովերն՝ առատ շարա՛լ գտնելով:
Փորելով զայն՝ գտան երկուք ու կէս մասանա-
յափ խորութեամբ բուսական երկիրն տակ՝ նախ
կին քարոտ և խճային յատակն:

Յամին 1876 Ապրիլի երկրի մէջ գտնուեցան գեա-
նոյն տակ հռովմէական հին տաճարասանին ըն-
դարձակ գահէն մը աւերակներն: որոյ որմունքն
ճեղքուած քանդուած էին, յատակն մուսէոն
քարերով շինուած, հռովմէական կայսերաց
գրամներ, ամբաստուածն կը գտնուէր 11-16
մասանայափ բուսական հողայ տակ: Պ'զմունքն
կտարուած առաջին օրուան մէջ՝ յատակին
վրայ տեսնուեցան եօթն հատ ծակեր. իսկ եր-
կու օրէն վերջը ծակերուն թիւն քսան հինգի
հասաւ: Գործաւորաց երթեակէն անգիրնէն
խախտեցան քանի մը հողայ պնդացած ջան-
դուածներ, զորս մեկգի աւնելով երկցան չորս
մեծ որգեր, որք արագութեամբ սողացին ան-
յայտացան: Վերջ յիշուած ծակերուն քով կը
գիղուէին բազմաթիւ կղզիանք որգերու, և
յատակին քարերը միացընող կիրն՝ ծակծը-
կուած էր մաղիման որգերու շաճաբաներէ: Ես-
տակին քարերն՝ որոց տակը փորած էին որ-
գունք՝ տեղի տուած էին, և այս կերպով փո-
ցած, գոգացած անգիրուն մէջ ամենընտիր բու-

սական հող գիղուած էր: Տարուին այս գիւտին
նկրկայ գտնուելով, և բաղդատելով զայս երե-
ւայթներն՝ իրեն որգերու վրայ կատարած ու-
րիշ գիտողութեանց հետ, հեռեցուց որ այն ա-
մարաստունն մեծաւ մասամբ որգանց գործու-
նեւութեան երկրիս տակ թաղուած պիտի լինի:
Վասն զի որ և ի՛նչ աւարկայ, որ գետնոյն երեսը
ստորինեքով անհարժ կենայ՝ որգունք զայն իրենց
կղզիանքը կը ծածկեն: Հռովմէական այս ամա-
րաստանին վիճակին մէջ գտնուեցան նաև Համ-
բուրի վանքն, և ուրիշ երկու հռովմէական պա-
լատք, մէկն ՚ի Գրոտուրտ և միւսն ՚ի Բրատինկ,
և Սիլվեսգրի մոյր կիկղեցին. որով կը հեա-
ջնէ Տարուին, թէ հնախօսք երախտադէտ
պէտք է լինին այս խաւարատէր գործաւորաց,
որք այսլափ տարիներէ ՚ի վեր պահպանած են՝
իրենց հետաքրքրութեան և զարմանաց տրժանա-
ւոր տառարձանքս:

Այսպիսի և ասոնց նման գիտողութիւններէ
կը հաշուէ Տարուին, որ ոչ նուազ քան 10516
հազարքարամ բուսական հող՝ երկրիս խորէն
գեղջ ՚ի մակերևոյթ բերուած են՝ ամէն կէտի
վրայ, ուստի կը հետեցնէ զարձեալ, որ քանի
մը տարուան մէջ երկրիս հողէ յատակն՝ որգանց
ստամբունքն անցք մը կը կտտարէ: Այս կերպով
կը յաւելու նա, երկիրն ամենայամբոր կը գառ-
նոյ սոււցանելու գոյոս և զտրմունս: Վասն զի
անգագար շարժման մէջ լինելով, թէպէտ և
գանգաղութեամբ, այլ իւր ամէն մասունքն քի-
միական յարաբերութիւն կ'ունենան ամ-
թութեան հետ, որ օգէն կը թոփանցի եր-
կրի մէջ, նոյնպէս նաև ուրիշ բազմաթիւ թշ-
թոււաններու հետ: Այս թթուաններն ամե-
նագորտուոր միջոց են տարրալուծելու և բաժանե-
լու զմետաղային նիւթերն, որք կանխաւ ման-
րուած կը գտնուին սոցիոց աղեաց մէջ: Այս
շարժմամբ իւր կարողանայ հողն խոնաւութիւն
պահել իւր մէջ, ծծել ամէն լուծանելի մարմին:

Միւսած կենդանեաց ոսկրներն, և միշտաց
ոսկրային կամ պինդ մասունքն, տերեւներն, ճիւ-
ղերն, կը ծածկուին կամոց կամոց որգանց կըղ-
կանոց, և աւելի կամ նուազ բաղադրուածութեան
կ'ենթարկին, ձեռացընելով այն ամենապարարտ
և գորշադոյն հողը զոր երկրաբանք լատին բա-
ռով humus (ընտհոլ) կ'անուանեն, և որ ծը-
նոււնք կու ապա այն կանաչութեամբ որ քողի նը-
ման կը տարածուի երկրիս մակերևութին վրայ: